51. ԿԱՐԴԱՑՎՈՐ ԱԽՊԵՐ

Իրեք մարդ կէջնին՝ մեկ հ'էրկրացի, կէլնին էջնին ախպեր ու կէրթան խուրբաթ։ Կէրթան թագավորի մը մոտ կէջնին մշակ, ժում ու ժամանակըմ կմնան էդտեխ, կէլնին օր դառնան հ'իգան ուրանց տուն, թագավորին կասին.—Զմըր հախեր տուր, պիտի դառնանք էրթանք մըր հ'էրկիր։

Էնդոնցնէ մեկն կարդալ գինա, կարդացվոր է, մեկել էրկու պիլադի շինական, կարդալ չըն գինա։

Թագավոր կբերե, էրկուսի հախի տեխ փարա կիտա, մեկին լէ գիրքըմ կիտա անուն «Հազարեկ» կէջնի։

Գիրքն կարդալ չգիտցողին կիտա, կարդալ դիացողին՝ փարա կիտա։

Էդ իրեք ախպերն է, կէլնին, կառնին ղուրանց հախեր, կդառնան կիգան հ'էրկիր։

Գիկան ճամբու հետ, կարդացվոր ախպեր կարդալ չգիտցող ախպոր կասե.—Ախպե՛ր, ես գինամ դու կարդալ չըս գինա, ղէդա գիրք կտանիս ի՞նչ կէնիս, էկո ղիմ փարեն իտամ քզիկ, զքու դիրք տուր ընծիկ, էրթանք։

Կարդալ չգիտցող ախպերն կըսե.—Թըղ էղնի,—կհանե զգիրք կիտա կարդացվոր ախպորն, չկարդացվոր ախպոր փարեն կառնե իրին։

Բարեմնաց կէջնին հ'իրարուց, էրկու ախպեր կթողին կիգան

ուրանց տուն, կարդացվոր ախպեր կմնա էնտեխ. կմնա էղտեխ, կիգա հ՚ախպրիմ՚ վրեն կնստի ու կհանե զուր գիրք, քիչըմ կպըթ-պըթա, կտեսնա օր ախչիկըմ հ՚ախպրի ակ պըպզուկ է, մանի տասնուհինգ ավուր լուանյակ։

Տղեն կասե.—Ախչի՛, հ՚էլի արի էդա տեխ։

Ախչիկն կասե.—Օր ընծիկ բան չանիս, խոսք իտաս զիս առնիս, կէլնիմ կիգամ, թը չէ՝ չըմ հ՚իգա։

Տղեն կասե.—Ուխտ էղնի, ես՝ քզիկ, դու՝ ընծիկ։

Կէղնին կառնին զիրար, հ՚ախպրից քիչըմ հեռուն դուրան տեխըմ կեր, ուրանց էրկու տակ քողտիկըմ կշինին ու կմնան հ՚ոդի։

Ավուրըմ մեկ թագավորի մշկներ կբերին զթագավորի ձիանք էդ հ՚ախպրի վրեն շուր կխմցուն, կտեսնան օր ինչխըդար կբերեն վըր հ՚ախբրի գրուան, կխռաին, դառնան հետ։

Մշկներ կասին.—Ջանըմ, էդ ի՞նչ պիտի էղնի։

Կէրթան գրուան մեշ կիշքին, կտեսնան օր լուանյակ հանդե մըջ ջրին. զզլուխ կվերցուն վերին դին կիշքին, կտեսնան օր ախչիկըմ էնդին զգլուխ թալեր է փանշարից ու զուրանք թամաշա կէնի, դիլ ու մայիլ կմնան։ Կխմցուն զուրանց ձիանք, կքաշին կիգան թագավորին կասին.—Ըպը չա՞սիս, ֆլան հ՚ախբրի վրեն էրկու տակ քոշքիկըմ կա շինուկ, ախչիկըմ նստուկ փանջարեն, որն օր տեսնա, չոքերու խուտում կկոտրի։

Թագավոր կէլնի, կիգա, կիշքե, կտեսնա օր օղորդ է, կասե.—Իմա՞լ էնիմ զէդ տղեն կորցում, առնիմ զէդոր կնիկ։

Մարգում՚ մեկ կասե.—Ճամբե թըղ էրթա ճութըմ խաղող բերե, հըմալ ճութըմ, օր քանի ուտին, վրանեն հատ չպակսի։

Թագավոր կասե.—Վալայի, աղեկ ասիր. գացե՛ք, կանչեք զէդ տղեն թըղ հ՚իգա։

Կէրթան, կանչին զտղեն, կասին.—Քելե էրթանք, զքզիկ թագավոր կկանչե։

Կէլնի կիգա, բարև կիտա ու կկանի թագավորի հ՚առեշ։ Կասե.—Թագավոր ապրած, զիս հ՚որի՞ն իս կանչի։

Թագավորն կասե.—Լառ՛, զքզիկ կանչեր իմ՚ քինե ճութըմ խաղող կուզիմ, օր ինչխըդար ուտին, վրանեն պտուղ չպակսի։

Տղեն կասե.—Շա՛տ աղեկ։

Թամանա կէղնի, կէլնի կիգա ուր տուն, զմատեն կէնե ու կնստի։ Կնիկն կիգա, կտեսնի օր իրիկ զմատեն էրեր է ու նստի, կասե.—Մարդ, խեր էղնի, զքու մատեն հ՚որի՞ն իս էրի։

Տղեն կասե.—Ձիմ մատեն չէնիմ, իմա՞լ էնիմ, թագավոր կանչեր է դիս, կասե. «Ընծիկ հ՚ըմալ ճուքըմ խաղող կբերիս, օր ինչ-խըղար ուտին, վրավեն պտուղ չպակսի»։

Ախչիկն կասե.—Էդ հ՚որի՞ իս էրի զքու նյաթն։

Տղեն կասե.—Հա՛, հ՚որին էդի քի՞չ բան է։

Կասե.—Հ՚էլի, առ քղիկ հաց, գնա նստի վըր էն հ՚աղբրին, հ՚ուսդեն օր դիս բերիր, առ զքու գիրքն ու նստի վըր հ՚աղբրին, կարդա, հանդե իմ քուր կիգա։ Օր էկավ, քղիկ կասե. «Ի՞նչ է փեսա»։ Ասե. «Քու քուր ճամբեր է դիս, ասեր է, գնա իմ քուրոջ ասե, էն կորդ հ՚իգուց թըղ էրթա ճուքըմ խաղող առնե հ՚իգա, իտա քի՝ առ ու էկո»։

Տղեն հ՚էլավ առավ զուր գիրքն ու հացըմ էրկու, էկավ, նըստավ վըր հ՚աղբրին, հանեց զուր գիրքն ու ռազեց կարդալ։ Կարդաց, կարդաց, կարդաց, տեսավ օր քենին էկավ, ասեց.—Փեսա՛ջան, հ՚որի՞ն իս էկի։

Տղենն ասեց.—Քու քուր ճամբեր է, ձըր կորդ հ՚իդուց ճուքըմ խաղող կհ՚ուզե։

Ասեց.—Կանի՛ էդա տեխ, էրթամ առնիմ ու հ՚իզամ։

Տղեն կանավ էդտեխ, քենին գնաց ճուքըմ խաղող բերեց, տվեց փեսին, առավ ու էկավ։

Առավ էկավ ճամբու հետ, պտուղըմ էրկու փրթուց դրեց բերան, տեսավ օր էնդոնց տեխ, թաժա դրվավ։ Առավ ու էկավ, տվեց թագավորին, թափան վրեն, ինչքան կերան, տեխ լցվավ, ինչքան կերան, տեխ լցվավ։

Թագավորն ասեց.—Ջանըմ, խաղող էր հ՚ուզեցինք գնաց առավ էկավ, հըմկա ի՞նչ հ՚ուզինք օր չկառնա էրթա բերե, զէդոր կնիկն ձեռքեն առնեմ։

Իմ պես ջուլևիկ մարդըմ էնդիեն թռավ ասեց.—Թագավոր ապրած, քու դիվնի վրայով, նը՛ մեկ մատ հ՚ևել էղնի, նը՛ մեկ մատ պակաս, խալիմ՝ հ՚ուզե, հանդե չկառնա էրթա բերե, կբռնիս զկնիկ կառնիս ձեռնեն։

Թագավորն ասեց.—Վալայի՛, էդա լէ աղեկ է։

Կանչեց զտղեն, ասեց.—Տղա՛, կէրթաս իմ հ՚օդի վրայով խալիմ՝ կբերես, մեկ մատ հ՚ևել, պակաս չէղնի, էղնի՝ զգլուխ կղարկիմ։

Տղեն թամանա էրեց, հ՚էլավ էկավ ուր տուն, էրեց զմատեն ու նստավ. կնիկն դրսեն էկավ, տեսավ օր էրիկ զմատեն էրեր է ու

նստի, ասեց.—Մա՛րդ, խեր էղնի, զքու մատեն հ՝որի՞ն ես էրի նստի, էմ լէ ի՞նչ է էղի։

Մարդն ասեց.—Խեր ու շառ խառվեր է հ՝իրար, թագավոր դրեր է վըր ընծիկ, կասե. «Քինե հըմալ խալիմ՝ կուղիմ օր իմ հ՝օդի վրայով էղնի, մեկ մատ հ՝ևել, մեկ մատ պակաս էղնի՝ զգլուխդ կզարկեմ. շիվարեր իմ, մանցի, ես հ՝ո՞ւզեն հըմալ խալիմ՝ բերիմ, իտամ էդոր։

Ախչիկն ասեց.—Էդոր սապրպո՞ւն իս էրի զքու մատեն։

Տղեն ասեց.—Իմալ, էդ քի՞չ բան է։

Ախչիկն ասեց.—Իսկի՛ մարախ մ՝էնի, հ՝էլի առ քզիկ հացըմ՝ էրկու, զքու գիրքն ու գնա նստի վըր են հ՝աղբրին ու կարդա։ Հանդե իմ քուր կիգա, կասե. «Փեսա, մեկ լէ հ՝որի՞ն իս էկի, ի՞նչ կուզիս»։ Կասիս. «Զըր քուր զէն պզտի հ՝ոդի խալին կուզե»։ Կէրթա բերե, կիտա քի, կառնիս կիգաս։

Տղեն կնկա ասածի պես, հ՝էլավ հացըմ էրկու զարկեց ուր հանթե տակն ու գնաց նստավ վըր հ՝աղբրին, կերավ զուր հացխմեց զուր շուր ու հանեց զուր դիրք, ռազեց պըթպըթալ. մեկ լէ տեսավ՝ քենին հ՝էլավ հ՝աղբրի ակեն ու էկավ, կանավ հ՝առեջ։

— Փեսա՛ շան, մեկ լէ հ՝որի՞ն իս էկի։

Ասեց.—Քու քուրն է ճամբի, զէն պզտիկ հ՝օդի խալին կուզե։

Քենին ասեց.—Դու մանցի հ՝ոդա, կէրթամ, բերիմ իտամ քիր առ ու զնա։

Գնաց բերեց, տվեց, ասեց.—Ա՛ռ ու գնա, իմ քուրոջ բարև էրե։

Տղեն առավ ու էկավ, տարավ տվեց թագավորին, տարան հ՝օդեն պարզեցին, տեսան օր ինչ օր հ՝օդի վրեն չափեն ու կտրեն, նը՛ մեկ մատ հ՝ևել, նը՛ մեկ մատ պակաս։

Թագավորն ասեց ուր մարդոց.—Ջանըմ, էդա հըմլա չէղնի, ինչ օր հ՝ուզեցիք էդ մարդու մոտեն, գնաց առավ ու էկավ, ճամբեմ գտեք, ճամբինք զէդ մարդն էրթա ու չիգա, օր կնիկ մնա ընծիկ։

Էնդիեն չըովըղ մարդըմ թռավ, ասեց.—Թաղավոր ապրած, էդ մարդուն մեկ բան մնաց, օր ճամբիս՝ էլ չի դա։

Թագավորն ասեց.—Ի՞նչ է, ասե տեսնամ։

Ասեց.—Ճամբե, թըղ էրթա էնդիի աշխարհք, տեսնա քու պապու հալ ու հալբաթն իմալ է ու դառնա հ՝իգա։

Թագավորն ասեց.—Վալա՜յի, էդա վըր հ՚ըմնուն աղեկ է. ո՞րն է օր կէրթա էնդիի դյունիեն ու կդառնա կիգա։

Կանչեց զտղեն, ասեց.—Տղա՜, մեկ բան մնաց օր էնիս, թողիմ էրթաս քու տուն նստիս։

Տղեն ասեց.—Ի՞նչ է, ամր էրե։

Թագավորն ասեց.—Զքզիկ պիտի ճամբիմ էրթաս էնդիի աշխարհք, իմ հոր մոտեն սալըխըմ առնիս ու հ՚իգաս, իմա՞լ է, իմա՞լ չէ։

Տղեն ասեց.—Թը՜ղ էղնի։

Հ՚էլավ թամանա էղավ թագավորից ու դարձավ էկավ տուն, զմատեն էրեց սարտավ ու նստավ։ Կնիկն էկավ, տեսավ, ասեց.—Մա՜րդ, մեկ լէ ի՞նչ զոր է առի քե, զմատետ էրեր իս։

Մարդն ասեց.—էլ ի՞նչ էղնի, թագավոր դրեր է վըր ընծիկ, կասե. «Պիտի էրթաս իմ հորնե ջուհաբըմ առնիս էնդիի դյունիից ու հ՚իգաս»։ Շիվարեր իմ ու մանցի, խաղող, խալի հ՚ուզեց, հալա գացի քու մարիֆաթով առա ու էկա, էնդիի դյունիից իմա՞լ մարդ կէրթա խաբար կբերե։

Կնիկն ասեց.—Մա՜րդ, խասավաթ իսկի մ՚էնի, աստված օղորմա՜ծ է, պառկի՜, քնի, հ՚էլնինք հեղրմ լուսուն, աստված դուռրմ կբանա։

Պառկան քնան, հ՚էլան լուսուն։ Կնիկն իրկան ասեց.—Կէլնիս առնիս քղիկ քիչըմ հաց ու զքու գիրք, կէրթաս նստիս վըր հ՚աղբըրին ու կկարդաս, հանդե իմ քուր կիգա, կասե. «Փեսա՜, էմ լէ հ՚որի՞ն իս էկի»։ Կասիս. «Թագավոր գրեր է վըր ընծիկ՝ իլայի կէրթաս էնդիի դյունիեն, իմ պապուց սալըղրմ կառնիս, կիգաս»։ Էկեր իմ օր զիս տանիս էնդիի աշխարք, մեկ լէ դարձուս առնես իգաս»։ Կառնե զքզիկ ու կէրթա։

Կարդացվորն է, հ՚էլավ, զարկեց զուր գիրք ուր հ՚անթի տակ, հացըմ լէ բուռմեց, առավ ձեռք ու դնաց վըր հ՚աղբրին նստավ, կերավ զուր հացն, հանեց զուր գիրքն ու կարդաց, կարդաց հար քենին հ՚էլավ էկավ։

— Ի՞նչ է, փեսա շան, մեկ լէ էկե՞ր իս։

Տղեն ասեց.—Ի՞նչ պիտի էղնի։ Թագավոր գրեր է վըր ընծիկ, կասե՝ իլայի կէրթաս էնդիի աշխարհ, ջուհաբըմ կրերիս իմ հոր մոտեն ընծիկ։ Հիվի կէնիմ քինե, օր զիս առնես էրթաս էնդիի դյունիեն ու դառնաս հ՚իգաս։

Քենին ասեց.—Զքզիկ կտանիմ, բըլե տես, ճամբու վրեն ինչ-օր կտեսնաս, չէղնի՞ բան հարցուս, էնդիեն օր դարձար էկար՝ նոր կհարցուս։

Առավ զտղեն ու տարավ տեխըմ դրեց։ Ասեց.—Քու ճամբախ-էդա է, ես կկենամ էդա տեխ, հար դառնաս հ'իդաս, օր առնիմ զքզիկ էրթամ, բըլե տես՝ մեկ լէ թանբիհ կէնիմ քզիկ, օր էդա դին ինչ օր կտեսնաս, չհարցուս, էնդիեն օր դարձար էկար՝ նոր կհարցուս։

Տղեն հ'ընկավ ճամբախ ու գնաց. տեսավ օր պառավըմ կա էդ ճամբու հ'օրթըլախ նստուկ, տաշտըմ հաց լէ կշտի հետ, վիրա կբոռա. «Ցամա՜ն, անոթից մեռա»։

Կարդացվոր զգլուխ տարավ բերեց, մեկ լէ բան չհարցուց, թողեց գնաց։ Գնաց քիշըմ էնդին, տեսավ ըստհաղ էրկու մարդ մտուկ ին մըջ ջրին, կբոռան. «Ցամա՜ն, իրա՜նք ու վառա՜նք»։ Տղեն զէն տեխ լէ հ'ընցավ։ Քիշըմ տեխ գնաց, էրկու կալ տեսավ՝ մեկն լինք, մեկն՝ դարտակ, զէն լէ հ'ընցավ։ Գնաց հ'ըռաստ էկավ թագավորի հոր, տեսավ օր՝ հանդե մըջ կպրե կարսին մտուկ, կուպր ըցած ին բոլոր, հ'էլեր հար բոկ։ Բարև տվեց զբարև առավ։

Կարդացվորն ասեց.—Թագավորի հեր, գինա՞ս ես քզիկ հ'ապով։ իմ էկի, քու տղեն է զիս ճամբի, օր քինե ջուհաբըմ առնիմ, էրթամ ուրին, իմա՞լ իս, իմա՞լ չիս, ի՞նչ կէնիս, ի՞նչ չըս էնի։

Թագավորի հերն ասեց.—Զիմ հալ կտեսնաս, գնա թարիֆ էրե, ես ի՞նչ ասիմ քզիկ։

Տղեն ասեց.—Կէրթամ կասիմ, չըն հավտընա, կասին. «Սուտ կասիս, դու չըս գացերի, էկի»։

Թագավորի հերն ասեց.—Էն տեխ օր ես կպառկենք, էնտեխ էրկու կուկում օսկի կա, գնա ուրանց ասա, թըղ քակին, հանին. օր չէղավ, թըղ դինան, ինչ օր կասիս օղորդ է։

Բարեմնաց էղավ ու հ'էլավ հ'ընկավ ճամբախ՝ էկավ։ էկավ տեսավ, օր էրկու կալ կեն վըր ճամբուն, մեկն ցորեն ջեղջուկ—ջեղջուկ կէլներ հ'էրկինք, մեկն՝ դարտակ։

Ասեց.—Էդոնց մանեն ի՞նչ է։

Լինք կալի տերն ասեց.—Էդա իմ կալն է, էնդիի ինչ օր գիկեր իմ կալի մեջ, զըմեն կիտենք ախքրտներուն, աստված լէ ընծիկ էդա դյունիեն տվե։

Դարդակ կալի տերն ասեց.—Էդա իմ կալն է, էնդիի դյունիեն ես ախքրտներուն չըմ տվեր ի, էդա դյունիեն լէ ընծիկ չըն իտա։

Էկավ տեսավ օր Էրկու մարդ մտուկ ին ջրի մեջ, կբոռան՝ «Ցամա՜ն, իրա՜նք, վառա՜նք»։

Ասեց.—Էդա ի՞նչ է։

Էդ Էրկու մարդ ասին.—Էնդիի դյունիեն միզմե շուր հ՚ուզեր ին, չընք ավեր ի, էդա դիի դյունիեն լէ մզիկ չըն իտար շուր օր խմինք։

Ջէն լէ հ՚ընցավ, էկավ պառվու խեչ օր կասեր՝ «Ցամա՜ն. անոթից մեռա»։

Էկավ, հասավ, հարցուց, ասեց.—Ըշտա հացի տաշտ հանդե քու կշտի հետ դրուկ, հ՚որի՞ չըս վերցու ուտի, օր կասիս. «Ցամա՜ն, անոթից մեռա»։

Պառավն ասեց. «Էդ հացի տաշտ իմ չէ, ուրիշին է, ես էնդիի դյունիեն հաց չըմ տվերի մարդու, էդա դիի դյունիեն լէ ընծիկ հաց չըն իտա ուտիմ»։

Թորկեց էկավ քենոշ խեչ, պատմեց զուր գլխու գալած, հըմլա տեսա, զթագավորի հեր լէ հարցուցի հըմլա ասեց, նոր թորկեցի դարձա էկա։

Քենին վերուց զէդ մարդ, մեկ լէ հ՚աղբրի հ՚առեջ դրեց, ասեց.—Դր՚ գնա։

Տղեն դեմ քշեց, էկավ թագավորի մոտ, ասեց.—Գացի ու էկա։

Թագավորն ասեց.—Սուտ կասիս, օր գացիր էկար, հ՚ո՞ւր է իմ հոր նշան։

Ասեց քու հոր նշան էդա է՝ ասաց. «Կէրթաս իմ պառկելու տեխ էրկու կուկում օսկի կա հորուկ, կհանին, օր հանին՝ թըղ ավտընան, օր դու էկեր իս իմ խեչ ու դարձի գացի»։

Հ՚էլան գացին, փորին զտղի ցուցուցած տեխ, տեսան օր օղորդ՝ էրկու կուկում օսկի հանդե հորուկ է թագավորի հոր պառկած տեխ, ասին. «Օղորդ է, դու գացեր իս ու էկի»։

Նոր թագավոր բերեց տուն ու տեխ տվեց էդ տղին, ասեց.—Հ՚որես բաց, արի հ՚ոդա մանցի, ես քու հետ խիանաթ ենք, բըլե աստված քու հետն էր. հ՚ուր օր ճամբեցի՝ դարձար էկար, գնա՜, քզիկ էլ խոռ աչքով իշքող չկա։

Նոր էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։